



ԲԻՐԱԿԱՆԻ ԱՍՏՂԱՊԻՏԱՐԱՆԸ

Բիրականի աստղադիտարանը համաշխարհային յայտնի կեդրոններէն մէկն է, որ հիմնադրուած է 1946 թուականին, մեծագոյն գիտնականներէն Վիքթոր Յամբարձումեանին կողմէ: Աստղադիտարանը կը գտնուի Արագած լեռան հարաւը:

Աստղադիտարանը կազմուած է երկու մասերէ՝ բնակելի աւան - արհեստական բաժին, որ կը պարունակէ՝ դիտաշտարակները, տարրալուծարանային շէնքերը, ժողովասրահը եւ հիւրանոցները:

Տարիներու ընթացքին աստղադիտարանը արձանագրած է գիտական մեծ յաջողութիւններ եւ փաստեր, որոնցմէ ամենէն կարելորը նոր (երիտասարդ) աստղերուն գոյութեան ապացոյցն է:


Տարիներու ընթացքին գիտնականները կը հաւատային, որ բոլոր աստղերը միլիառ տարիներ առաջ յայտնուած են, որմէ ետք նոր աստղեր չեն տեսնուած, սակայն գիտութեան յառաջդիմութեամբ, կարծիքները ամբողջովին փոխուեցան

Եւ երիտասարդ աստղերուն գոյութեան երեւոյթով կարծես տիեզերքը նոր կեանք ստացաւ: Մեկնած զանազան զարմանալի փաստերէն, ի յայտ եկած է նաեւ, որ գոյութիւն ունին այնպիսի աստղեր, որոնց փայլքը կը զօրանար, ստանալով բռնկելու տեսք եւ շրջան մը ետք դարձեալ կը վերադառնար իր նախկին տեսքին:

Այս երեւոյթը յատուկ է երիտասարդ աստղերուն, ճիշդ այնպէս ինչպէս երիտասարդները միշտ աւելի աշխոյժ կ'ըլլան քան տարեցները:

Այսօր՝ Բիրականի աստղադիտարանին մեծագոյն աստղադիտակը 2.6 մետր հայելիով դասական դիտակն է, որուն միջոցով կարելի է մանրամասնութեամբ ուսումնասիրել տիեզերական մարմինները (աստղերը, մոլորակները):


Բիրականի աստղադիտարանը մեծ յաջողութիւններ արձանագրեց տարիներու ընթացքին փաստեր ներկայացնելու ծառայութեան մէջ: Ան ո՛չ միայն ազգային, այլ նաեւ միջազգային հսկայ արժէք ունեցող կեդրոն է:



ԹԻՒԵ ՊԱՏՐԱՍՏԵՆՆԵՐ՝ ՄԱՐՈՒՆԻ ԱՇԽԱՆԻ ՇԱՀՆԵՆԻՆ, ՆԿԱՐԱԶԱՐՈՒՆՆԵՐ՝ ՈՒՅՅԻ ԲԵՐԵՆԵՆ



Միացր՛ւր թիւերը, ապա
ներկէ՛ կազմուած
պատկերը:



Կրնա՛ս լուծել:



ՄԻ՛ ԸՍԵՐ

Մեծ
Կլմանի
Այրուն
Երկայն
Սեյնակ

ԱՅԼ ԸՍԷ՛

Մեծ
Կը նմանի
Արիւն
Երկար
Սենեակ

Ինքզինքս ասելի լաւ ճանչնամ: (Թիւ 1)

- Ես անձ մըն եմ, որ կը սիրեմ
- Ես անձ մըն եմ, որ չեմ սիրեր
- Ես անձ մըն եմ, որ չեմ կրնար
- Ես անձ մըն եմ, որ կրնամ
- Ես անձ մըն եմ, որ ըրած եմ

ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿԻ ՀԱՅՐԸ ԱՐԱՍ ՆԱՅԱՊԵՏ

Նինոսի կիսն էր... Շամիրամը:

Արամ Նահապետի յաղթանակները աւելիով կը չարչարէին Նինոսը, որ սակայն իր չար մտադրութիւնը լաւագոյնս կը պահէր: Այսպէս, ան երբեմն-երբեմն Արամ Նահապետը իր մօտ կը հրաւիրէր, անոր հետ եղբօր պէս կը խօսակցէր, զայն կը քաջալերէր, նոյնիսկ անոր մարգարտեայ վարսակալ կրելու իրաւունք կու տար եւ իր երկրորդը համարուելու կոչում կը շնորհէր:

Սակայն իր կարգին Արամ Նահապետ այդքան ալ դիւրահաւատ չէր: Փաստօրէն կը տեսներ, որ Նինոսի ցեղէն Բարշամ անունով զօրապետը յաճախ սահմանային յարձակումներ կը գործէր Հայաստանի դէմ, սակայն Նինոս զայն կարգի չէր հրաւիրէր:

Միւս կողմէ, Ասորեստանի մէջ կը հաւատային, որ Բարշամ հսկաներու ցեղէն սերած է, ուստի զայն կը պաշտէին:

Բարշամ իր քառասուն հազար հետեւագօրծով եւ հինգ հազար հեծեալներով Հայաստանը քարուքանդ ըրած էր եւ ծանր հարկերով կը նեղէր ժողովուրդը: Արամ Նահապետ վերջապէս իր կորիւններով յարձակեցաւ Բարշամի վրայ, զայն հալածեց մինչեւ Ասորեստանի խորերը, բռնեց եւ սպանեց: Այս ձեւով Ասորեստանի դաշտերու մէկ մասն ալ Հայաստանին հարկատու դարձաւ:

Ասորեստանի սահմանը մաքրագործելէն ետք Արամ Նահապետ այս անգամ շարժեցաւ դէպի արեւմուտք՝ իր երկրորդ թշնամիին դէմ, որ կը կոչուէր Պայապիտ Քաղիա:

Արդարեւ, Պայապիտ Քաղիան գրաւեր էր Կապաթովկիական Կեսարիան եւ կը սպառնար Հայաստանին: Արամ Նահապետ հալածեց զայն, որ մուկի պէս փախաւ եւ պահուրդտեցաւ կղզիի մը մէջ:

Արամ Նահապետ, հայացնելու համար Կեսարիան, անոր կառավարիչ նշանակեց իր ազգակիցներէն Մշակ անունով զօրապետը, անոր ձգեց տասը հազար զինուոր եւ ինք վերադարձաւ Հայաստան: Մինչ այդ Արամ Նահապետ հրահանգեց, որ կեսարացիները հայերէն գրել-կարդալ սորվին: Այս պատճառաւ յոյները այս երկրամասը կը կոչեն Պռոտին Արմենիա (Առաջին Հայք):

Արամ Նահապետ ընդարձակեց եւ ամրացուց Հայաստանի սահմանները եւ իր քաջագործութիւններով այնքան անուանի դարձաւ, որ իր օրերէն մինչեւ այսօր օտարները Արամ Նահապետի անունով մեր երկիրը՝ Արմենիա եւ մեր ազգը Արմէն կը կոչեն:

Արամ Նահապետ երկար ապրեցաւ եւ շէնցուց մեր հայրենիքը: Անոր յաջորդեց իր անդրանիկ զաւակը՝ Արա Գեղեցիկը:

(Վերջ)



ԼՈՒՑԿԻ ԵՒ ՄԵՏԱՂԱԴՐԱՄ

Լուցկին եւ մետաղադրամը առարկաներ են, որոնք կը գործածենք մեր առօրեայ կեանքին մէջ: Հետաքրքրական է գիտնալ, թէ այս իրերը ինչպէ՞ս կը պատրաստուին:

ՄԵՏԱՂԱԴՐԱՄ

Մետաղադրամ մը շինելու համար՝ կը սկսին գաճէ մեծկակ բնօրինակ-քանդակ մը պատրաստել: Ապա, մետաղադրամի չափով մետաղէ օրինակ մը կը պատրաստեն անկէ: Այս օրինակը կը կոխուի ուրիշ պողպատէ կտորի մը դիմաց, որպէսզի կնիք մը ունենանք, այսինքն՝ վերջնական կաղապարը: Նոյն գործընթացը կը կրկնուի մետաղադրամի միւս երեսին համար: Մետաղի սկաւառակները կը ճնշուին երկու կնիքներու միջեւ եւ մէջտեղ կու գայ մետաղադրամը:



ԼՈՒՑԿԻ

Լուցկին տախտակէ շիւղ մըն է, որուն ծայրը թաթխուած է փարաֆին նիւթին մէջ եւ կրակ կ'առնէ շփումով: Մէկ ծառը կրնայ տալ մէկ միլիոն շիւղիկ: Լուցկիի գործարանի այս շիւղերը կը տեղադրուին թաթխողի բազմաթիւ ծակտիկներուն մէջ, որ զանոնք նախ փարաֆինի, ետքը կարմիր ծծումբի մէջ կը թաթխէ: Ապա, լուցկիները կամաց-կամաց կը չորնան հովահարներու առջեւ անցնելով: Վերջապէս, անոնք կը շարուին տուփերու մէջ:

